

ESTUERE

POSTER POSTER

42,800 5

APR 1 1845

57



O' my love

Իսկ զըրևած պատկերը կընե՛րկայայցընէ
 Լ՛գուարդ ճէնէ՛ր անոն Լ՛նգընացի հըւ-
 չակաւոր բժիշկը , որ կոպու ծաղկին հիւ-
 Թովը պատուաստ ընէրու սովորութիւնը ա-
 ռաջին անգամ ինքը հնարեց : Լ՛ս անձը
 մեծամեծ տաղանդներու տէր էր , և զիտո-
 ղութեանց մէջ իր զօրաւոր կարողութիւննե-
 րուն համար խիստ երեւելի : Լ՛մէն մարդ գիտ-
 նարով պատուաստին յարգը՝ պարտաւոր է
 Լ՛ստուծոյ Հնորհաւած անոր աս մեծ տաղանդ

Ներուճն , որոնցմով դուռն ան ծաղկել շուտն
 դաւոր հիւանդութեան միտի զեղը , որն ու
 ոչ մէկ դարու մը և ոչ մէկ երկրի մը մէջ
 գտնուած էր մինչև անատեանք : Հիւրաւի
 անկէց , տաւջ ուրիշ զանազան կերպերով
 պատուաւոր ընելու սովորութիւնը կար ,
 բայց անոնցմէ ոչ մէկը հիմնականին զօրու
 թիւնը ունէր :

Հաստատենք 'ի վեր մարդիկ կրտսանելն
որ մեկտեղ բնակող կոմերու հօտերուն

մէջ տեսակ մը փոխադրական տես կը պատահի, որ յայտնի կըլլայ կենդանիներուն վրայ ծաղիկին պէս հիւթալից պալարներ՝ դուրս տալով, մանաւանդ անոնց ստինքներուն վրայ: Ամանապէս կը տեսնենք որ աս հիւանդութիւնը կը փոխուի անոնցմէ կաթ կթող հովիւներուն՝ ձեւքերներուն վրայ թեթեւ վէրքեր դուրս տալով, որոնք բնաւ մարմինին ուրիշ տեղերը չեն տարածուիր. և անոնք որ անգամ մը աս հիւանդութիւնը ունեցեր են, զարմանալի կերպով մը ազատ կը մնան ծաղիկ հիւանդութեանը վտանգէն:

Վերայ այս բանայնի շէնքերէն առաջ գիտուններէն մէկը աս բանին վրայ ղիտողութիւնը բաժնէ, և մտքէն ալ անցած չէր թէ կովերուն հանած ախտին հիւթը դեղ ըլլայ ծաղիկ հիւանդութեան: Շէնքեր իր պատանեկութեան ժամանակէն սկսեւ էր աս բանին վրայ խորհիլ. շատ տարիներ իր ուշադրութիւնը և ուսմունքը ասոր վրայ զբաղեցուցած էր, յաճախ հովիւներուն մէջ երթալով անոնց հարցուփորձ ընելով և իբրեւ ճշմարիտ փիլիսոփայ ընելով անոնց մէջ պատահած աս հիւանդութեան ներգործութիւնը և օգուտը: Իր հետաքոտութեանցը մէջ մարդոց ծաղրաբանութիւնները համբերութեամբ կը տանէր, և շարունակելով իր ըննութիւնները՝ 1796ին՝ մէկ պզտիկ տղայ մը պատուաստեց հովիւի մը ձեւացը ծաղիկին հիւթովը, և տեսաւ որ տղան անմիջապէս ծաղիկ հանց, բայց պատուաստին դորութիւնովը շատ թեթեւ անցուց: Ետք վրայ շէնքեր սկսեց անդադար փորձեր ընել, և 1798ին՝ հրատարակեց աս օգտակար գիւտը, յաջողութեամբ կատարուած քսանիւրբ օրինակներ ցուցնելով:

Առջի բերանը աս բանը գրեթէ անկարելի կերեւար ամէնուն. բայց շատ չանցած աս նոր գիւտը յայտնեց իր գերազանցութիւնը: և շուտով Անգղիայի ամէն կողմը տարածեցաւ: Հետոյ բժիշկները սկսեցին տարածել ուրիշ երկիրներուն մէջ, ուր մարդիկ յօժարութեամբ կընդունէին աս նոր գիւտը: Տէ Բարո բժիշկը նախ և առաջ մոցուց Վերմանիա աս նոր տեսակ պատ-

ուաստը, և շատ տարածեց. Սաքսոնիոն բժիշկը Խաւիայի մէջ, ութ տարին՝ 600,000 հոգի պատուաստեց բուն իր ձեւքովը, և ուրիշ 700,000 ևս ուրիշ ձեւք: Պատուաստը Ռուսաստան մոցունողը նախ անտեսնի Ռուսաց Թագաւորին մայրը եղաւ, որ շնորհակալութեան նամակ մը գրեց Շէնքերին, և ծանրազին անդամանդ մը ընծայ ըրաւ անոր: Ե վէտի և Վանիմարայի մէջն ալ շուտով ընդունուեցաւ պատուաստը, և շատ օգուտ ըրաւ հոնտեղ: 1800ին երբոր Վաղղիս տարին պատուաստը՝ Վաղղիսայիք մեծ եւանդով մը ընդունեցին զանիկայ, և շուտով տարածեցին իրենց երկրին մէջ. հոն ուշ տարուելուն պատճառը Անգղիացուց և Վաղղիսացուց մէջ պատահած պատերազմն էր: Պատուաստին զործածութիւնը Սպանիա մոնէրէն ետքը՝ Պալմիս վարպետ բժիշկը հրաման ընդունեց Սպանիայի Թագուհիէն, որ երթայ Սիւս և Վանիմարայի Սպանիացուց ձեւքը եղած դաւառներուն մէջ տարածէ զանիկայ, և տերութեան հրամանովը պատերազմական նաւ մը՝ ամէն կերպով աղէկ զարգարուած և մէջը բազմութիւ մանր տղաք ունենալով որ միշտ շատ հիւթ պատրաստ ըլլայ, երկրիս շրջապատը նաւարկեց, չէ թէ պատերազմ ընելու կամ անքաղաքավար աղագց մէջ գէշ սովորութիւններ մոցունելու համար, բայց մարդկային սեւին մէջ ճարակող մահաբեր հիւանդութեանը դեղթափ մատուցանելու համար: 1799ին՝ Սիւսիս Վանիմարէրը մտաւ պատուաստին սովորութիւնը, և անկէց կամայ կամայ տարածեցաւ բնիկ շէնքերիններուն մէջ: Շէնքեր շատ կուղեր Մեքսիկան շնդկաստան խրկել պատուաստին նիւթը, բանդի ծաղիկը հոնտեղ սատիկ կոտորած կընէր մարդոց մէջ. բայց աս բանը շատ անգամ չյաջողեցաւ, որովհետեւ խրկուած նիւթը ճամբան կապակոնէր. յիշեալ Տէ Բարո բժիշկին հնարքով պատուաստին նիւթը մոմեղէն գունտելու մէջ դրուելով՝ կոտանդնուպօլսի ճամբով Պոմպա տարուեցաւ և շուտով բոլոր շնդկաստանի վրայ տարածեցաւ: Աւելիս լայ Սպանիա մեծ ջանքով հոգ տարաւ պատուաստին տարածմանը, և շնդիկներուն նախապաշարմունքը փարատելու. որոնք դէմ

կրկենային աս բանին՝ սկիզբը կովէն առ նուաճ ըլլալուն համար, քանզի կովը սուրբ համարելով կրպաշտեն : Վերջապէս պատուաստը՝ իր դոնուէլէն մինչև վեց տարի անցնելը, երկրագունդիս վրայ ամէն տեղ տարածեցաւ :

Պատուաստի սովորութիւնը տարածուելէն ետեւ շատ տարիներ մարդիկ կը հաւատային որ անիկայ կատարելապէս ծաղիկ հիւանդութեանը առջին առնող զեղ մըն է . ճէնէնք ևս կը յուսար թէ աս միջոցովը ծաղիկը բոլորովին բնաջինջ ըլլայ : Բայց սակայն աս մօտ տարիներուս փորձառութիւնը յայտնի ցըցուց՝ որ երբեմն կը պատահի որ պատուաստ եղովները զիպուածով ծաղիկ կը հանեն . և թէպէտ աս ետքէն ծաղիկ հանողներուն հիւանդութիւնը շատ թեթեւ կը ըլլայ, բայց երբեմն անոնցմէ մեռնող ալ եղած է : Դաղիկը ևս՝ որ պատուաստի սովորութեանը տարածուելէն ետեւ, առջի տասն և տասներկու տարիները ջնջուած կը թուէր, մօտ տարիներս նորէն երեւան ելաւ սաստիկութեամբ, յիշաւ առջինին պէս սաստիկ կտորած չըրաւ, և մեռնողները գլխաւորապէս առանց պաշտպանութեան մնացող խեղճերն էին, այսու ամենայնիւ մեծ վախի մէջ մնացին մարդիկ : Դժմարիտ է որ հիւանդութիւնը ըստ մեծի մասին պատուաստին քիչ տարածուած տեղուանքը սաստիկ եղաւ . բայց քանի մը երկիրներու մէջ մը Շվեդի, Ռուսաստան, Իտալիա, Սէլան, ուր պատուաստը ազէկ կերպով զործածուեցաւ, և ուր ատեն մը ծաղիկը զաղարած կերէնար, ՚ի վերջոյ հիւանդութիւնը վերստին սկսեց, և պատուաստողներէն շատերը ծաղիկէն բռնուեցան :

Եւ զիպուածներուն վրայ բժիշկները ջանացին որ պատուաստին զօրութիւնը կորսուելուն պատճառը իմանան, և անոր դէղը հնարեն : Եւ բանիս վրայով ընդհանրապէս հաւանական եղած կարծիքը ան է թէ պատուաստին զօրութիւնը ժամանակաւոր է և նորոգութիւն կը պահանջէ : Եւ կարծիքը հաստատող շատ զիպուածներ եղան : Աւստի բժիշկները շատ ուզեցին որ պատուաստին երբ իր զօրութիւնը կորսնցունելուն ճիշդ ժամանակը իմանան, և անոր

համեմատ որոշեն երկրորդ անգամ պատուաստելու ատենը . բայց աս բանը մինչև ցայժմ յայտնի չեղաւ, միայն կը կարծուի թէ անոնք որ մանկութեան ատենը պատուաստուած են, շատ անգամ ծաղիկ կը հանեն երբոր այրութեան հասակին կը մօտենան, մանաւանդ երբոր ուրիշ երկիր մը երթալով իրենց սովորած օդը կը փոխեն :

Հրէից ազգին յօժարաւոր ընծայաբերութիւնը :

Թ . Իսրայելացւոյ անապատին մէջ եղած ատենը՝ երբոր Լստուծոյ հրամանովը Վկայութեան Խորանը շինուիլ սկսաւ, ամէն տեսակ ծանրագին բաներէն ընծայ բերուեցան շինութեան կարօտութիւնը լըցունելու համար : Տես Լւից. ԼԷ. 21—29 : Հրէից ազգին աս ընծայաբերութեան առատաձեռնութիւնը անանկ մեծ էր, որ Սոլսէս հրաման ըրաւ թէ ալ չբերէն . Լւից. ԼԷ. 5, 6 : Եւ դորժին մէջ զացած միայն ոսկիին ուարծաթին գումարը 29 տաղանդ*, և 730 սիկլ ոսկի էր . և 100 տաղանդ, 1775 սիկլ արծաթ . (Լւից. ԼԷ. 24, 25.) որ գրեթէ հուսար է 25,000,000 դահեկանի :

Բ . Երբոր Վկայութեան Խորանին նաւակատիկը կամ օրհնութեան հանդէսը կատարեցաւ, Իսրայելացւոյ տասներկու ցեղերու իշխաններուն նուիրած ընծան ոսկեղէն և արծաթեղէն անօթներ էին, որոնց արժողութիւնը կը հասնէր՝ 63,600 դահեկանի կամ 5,300 ամէն մէկուն տուածը : Եւ այն ատենը զոհ ըլլալու համար ընծայ բերուած զուարակները, այծերը և գառները կարժէին 20,000 դահեկանէն աւելը : Եւ թիւս. Է. 85—88 :

Գ . Սողոմոնի շինած տաճարին օրհնութեան հանդէսին օրը, Սողոմոն զոհ ըրաւ Լստուծոյ 22,000 եղն և 120,000 ոչխար, որոնց գինը 10,000,000 էն աւելի կը ընէ : Եւ թիւս. Է. 5 :

Դ . Կարգաւ Լազիկիւ թագաւորին բարեկարգութեանը սկիզբին յօժարակամ՝ մատուցուած ընծաները և զոհերը, որոնց արժէքը կը հասնէր 400,000 դահեկանի : Եւ թիւս. Է. 32 : Եւ Թ. 5—7 :

* Դանօթն-թէն . Տաղանդը 3,000 Սիկլ է

Է . Յօսիաս՝ պատերի տօնախմբութեալ նը համար նուիրեց 30,000 զառն և ուլ , ու 3,000 եղներ : 'Լոյն ատենը ուրիշ իշխաններն ալ մատուցին 7,600 փոքր կենդանիներ և 800 եղներ : Բոլորին արժէքը պակաս չէր 2,000,000 դահեկանէն , սս գումարին 1,800,000 թագաւորին տուածն է : ք . Սոոյ . Է . 7—10 :

Ը . Բաբելոնի գերութենէն դառնալէն ետեւ՝ Թագաւորին և իր նախարարներուն ու բոլոր Խարայէլացւոյ՝ Բստուծոյ Տաճարին նուիրած ոսկին ու արծաթը Լոյրաս 650 տաղանդ արծաթ 100 տաղանդ արծաթի անօթներ , 100 տաղանդ ոսկիի , քսան հատ հազար տրամնոց ոսկի անօթներ , նաև ոսկիի պէս երկու գեղեցիկ անօթներ : Բսոնց ամէնուն արժէքը 200,000,000 դահեկանէն աւելի էր : Լ . ք . 25—27 :

Է . Բայց շին կտակարանին մէջ յիշուած նուէրքներուն ամէնէն գերազանցը Գաւթիթին պարզեալ ընծան է Տաճարին շինութեանը համար : Տե . Խ . Սոոյ . Է . 14 : «100,000 տաղանդ ոսկի , 1,000,000 տաղանդ արծաթ . և պղինձ ու երկաթ աւանց կշառքի» : Բսկէց զատ Գաւթիթ պատրաստեր էր «3,000 տաղանդ Սփերի աղնիւ ոսկի , և 7,000 տաղանդ ընտիր արծաթ , աւանց մոլ տաճարին պատերը պատելու : Խ . Սոոյ . Է . 3—9 : 'Լաւ Զրէից իշխանները և մեծամեծները յօժարակամ «նուիրեցին 5,000 տաղանդ և 10,000 տրամ ոսկի» . «արծաթ 10,000 տաղանդ . 18,000 տաղանդ . պղինձ , և 100,000 տաղանդ երկաթ» : Բնդ ամէնը կընէ 108,000 տաղանդ ոսկի և 1,017,000 տաղանդ արծաթ : Բսոր արժէքը պղինձէն և երկաթէն զատ , կըհասնի 120,000,000,000 դահեկանի :

Բստուածային պաշտամանց մէջ սս հըրէական նախանձին և անձնուրացութեանը վրայով եղած վերի պատմութենէն կըկաւիմք հետեւեալ երկու հարցմունքը ընել :

Նախ՝ Բս պատմութիւնը քրիստոնէից մէջ զօրացած անտարբերութիւնը և անձնասիրութիւնը չմեղադրէր : Թէ որ շաւայի կողմէցիները՝ որ քրիստոնէութիւնը նոր ընդունած են (տես Հ տեմարանիս նախընթաց թիւը) չարաչար կընեղեն անձերնին որ Բստուծոյ պաշտօն մատուցանելու եկեղեցի

մը շինեն , և թէ որ հին օրինաց տակաւ ինչ լուսաւորեալ երկրպագողները անանկ յօժար հողաբարձութեամբ և անանկ առաւտաձեռնութեամբ իրենց տոպոսաւորը կը նուիրէին ամենակարող Լէհօլային տաճակաւուցանելու և զարդարելու համար , որ չափ առաւել պարտաւոր են քրիստոնէայ աղգերը յօժարութեամբ և աւառապէս ձեռնտու ըլլալու որ Բստարանը տարածուի և Քրիստոսի Թագաւորութիւնը հաստատուի բոլոր երկրիս վրայ :

Երկրորդ՝ յայտնի չէ՞րեալ որ Բստուծոյ շնորհք ծախու չառնուիր մեր բարի գործերովը կամ մեր ընծաներովը :

Հրէայք շատ զոհեր և ընծաներ կըմատուցանէին Բստուծոյ , (Տես Լսայ . Խ . 10—15 . բացատրուած Հ տեմարանիս մէջ շատ . Է . երես 85 .) բայց սակայն Բստուած մեծեց զանոնք իրեն ժողովուրդը ըլլալէն : Բնոնք՝ ուրիշ ընծաներէն զատ , կանոնաւորապէս բոլոր իրենց ունեցածին տաններորդ մասը Բստուծոյ պաշտօնին կը նուիրէին . բայց տակաւին Բստուծոյ շնորհքէն զուրկ մնացին : Բստուած թողուց զանոնք , և անոնց տեղը հեթանոսները ընտրեց իրեն ժողովուրդը ըլլալու : «Վերեմի ի՞նչ պիտի ըսեմք , եթէ շինութեաները որ արդարութեան չէին հետեւէր՝ արդարութեան հասան . ան արդարութեանը որ հաւատքէն է : Բայց Խարայէլը արդարութեան օրէնքին ետեւէն էր , ու արդարութեան օրէնքին չհասաւ : Ինչո՞ւ համար . վասն զի չէ թէ հաւատքէն , այլ որպէս թէ օրինաց գործքէն ուղիղ արդարանալ : Խ . 30—33 : «Բայց թէ որ ան ճիւղերէն մէկ քանին կոտրեցան , ու դուն որ վայրենի ձիթենի էիր՝ անոնց մէջ պատուաստեցար . . . ճիւղերուն դէմ մի՛ պարծենար . . . Ուրեմն պիտի ըսես , ճիւղերը կոտրեցան՝ որ ես պատուաստիմ . Բղէկ է , անհաւատութիւնով աւանդ կոտրեցան , ու դուն հաւատքով հաստատուեցար , մի հպարտանար , հապա՞վալիցիր . ինչու որ եթէ Բստուած բուն ճիւղերուն չխնայեց , պէ՞տք էր որ չըլլայ թէ քեզի ալ չխնայէ : Խ . 17—21 :

Բնէն բան անիմանալի է անոր՝ որ իմանալ է երկիւղ ունի :

Լուսաբեալն հիւանդները իւրով օծելու
սովորութիւնը :

“Աղբյւր մէկը որ հիւանդանոցի եկեղեցիին երեցները թող
կանգնէ՛ ու անոր վրայ աղօթք ընեն , Տէրոջ անունովը եղով
թող օծեն , և հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը ,
ու Տէրը անիկայ ոտք կը հանէ . և թէ որ մեղք ալ դորձեր է նե՛
պիտի ներուի անոր” : Հակոբոս . Ե . 14 , 15 :

Պօղոս առաքեալ կըսէ մեզի՝ թէ Լստ
ուած եկեղեցիին մէջը դրաւ , առաջ ա
ռաքեալները , երկրորդ՝ մարգարէները ,
երրորդ՝ վարդապետները , ետքը՝ հրաշքնե
րը , ետքը բժշկութիւններու պարգևները ,
ևն : «Սէկու մը» կըսէ , «Սուրբ Հոգիէն ի
մաստութեան խօսք տրուած է . ուրիշին զի
տութեան խօսք՝ նոյն Հոգիին տուած չա
փովը . մէկական հաւատք՝ նոյն Հոգիովը .
ուրիշին բժշկութեան պարգևներ՝ նոյն Հո
գիովը սա ամէնը մի և նոյն Հոգիին
կը դործէ , և ամէն մէկուն կը բաժնէ՛ ինչպէս
որ կուզէ” : Թ . Կրիս . ԺԲ . 8 , 9 , 11 , 28 :

Նաեւ մեր փրկիչը՝ երբոր իր համբաւ
նալու ատենը խրկեց իր աշակերտները ա
ւետարանը քարոզելու ամէն ստեղծուած նե
րուն , ըսաւ . «Նոնք որ կը հաւատան՝ սա
նշանները անոնց հետ պիտի երթան . իմ
անունովս զեւեր պիտի հանեն , լեզուներ
պիտի խօսին . ձեռքերնին օծեր պիտի բռն
նեն , և թէ որ մեռեցունող դեղեր խմեն՝ ի
րենց պիտի չմնասէ . հիւանդներուն վրայ
ձեռք պիտի դնեն՝ ու բժշկեն” : Մարկ . ԺԳ .
17 , 18 :

Նաեւ ասկէ առաջ իր տասներկու աշա
կերաները Լստուծոյ թագաւորութիւնը քա
րոզելու համար խրկած ատենը , իշխանու
թիւն տուաւ անոնց պիղծ դեւերուն վրայ՝ ա
նոնք հանելու , և ամէն կերպ ցաւերը ու ա
մէն կերպ հիւանդութիւնները բժշկելու :
Մարկ . Ժ . 1 :

Լս ամէն գրուածներէն կերկնայ՝ թէ
բժշկութեան պարգևն ալ լեզուներու , մար
գարէութեան , և հոգիի ընտրութեան պար
գևներու պէս , տրուած էր Վրիստոսի ա
ռաջին աշակերտներուն մէկ քանին , որ ի
րենց Լստուծոյ խրկուած ըլլալին մար
դոց հաւտացնելու համար անոնց օգնէն :

Հիմա՛ մենք յայտնի զիտեմք , թէ Տէրն
մեր երբոր բժշկութեան հրաշք մը ընելու
կըլլար , երբեմն միայն խօսքով մը կընէր ,
երբեմն զայլելով մը , երբեմն ալ հողով ու

թուքով շնուած կաւով : Գօրութիւնը
չէ՛ թէ սա բաներուն քովն էր , հապա իր
քովը . բայց սա բաներն ալ չորս կողմը ե
ղած խեղճ ու տգէտ ժողովուրդին նշան մը
ըլլալու համար կընէր : Եւ ի՞նչ նշան գործ
ածելու էին առաքեալները ան հրաշալի
բժշկութիւնները բրած ատեննին : Պատաս
խան կուտամք՝ թէ սա բանին վրայով ամե
նէին մէկ կանոն մը տրուած չէր անոնց :
Նոնք ալ երբեմն միայն խօսքով մը կը
բժշկէին , երբեմն նաեւ զայլելով մը . և
Սարկոս կըսէ մեզի՝ տասներկու առաքելոց
համար՝ երբոր Հիսուս բժշկութեան կարո
ղութիւն տալով ասդին անդին խրկեց զա
նոնք , թէ շատ հիւանդ ժողովուրդներ կը
բժշկէին իւրով օծելով : Մարկ . ԺԳ . 13 :

Հիմայ՝ սա իւրով օծելը շատ յարմար էր
անոնց դործածելու , որովհետեւ իւրը հա
սարակ դեղ մըն էր ան օրերը , ինտոր
նաեւ երբեմն ալ հիմա : Մանաւանդ թէ
Սուրբ Հոգին՝ ու իր պարգևները սուրբ
Վիլքին մէջը շատ անգամ իւրի օծումով
նշանակուած են : Եւ որովհետեւ հրաշքով
եղած բժշկութիւնը միայն Սուրբ Հոգիին
գօրութիւնովն էր , ուրեմն ասիկայ շատ
յարմար նշան մըն էր դործածելու անոնց :

Յակովբոս Լուսաբեալը կըսորվեցունէ
հիւանդ հաւատացեալներուն՝ թէ բժշկուե
լու համար պէտք է որ Եկեղեցիին երեցները
կանգնեն . (Թող զան անոնք՝ կըսէ , ու հի
ւանդին վրայ աղօթք ընեն , իւրով օծելով
անոնք . և հաւատքով եղած աղօթքը պիտի
փրկէ հիւանդը , ու Տէրը անիկայ ոտք կը
հանէ : Բժշկութեան հրաշալի պարգևները
դեռ անատենը հաւատք ունեցող մարդոց
տրուած ըլլալուն համար , Լուսաբեալը կը
յորդորէ իր հիւանդ եղբայրները՝ որ իրենց
ընծայուած արտօնութիւնը դործածեն , որ
այսպէս և՛ իրենք բժշկուին , և՛ Լստուա
ծային գօրութիւնը ու շնորհքը փառաւոր
ուի :

Ինչ և իցէ Վրիստոսի պաշտօնեաները
հիմա չեն վայելէր ան հրաշալի պարգևնե
րը , վասն զի ալ ևս հարկաւոր չեն անոնք .
որովհետեւ Լստուծոյ խօսքը հիմա հաստատ
ուեցաւ : Եւ ասոր համար ալ իւրով հի
ւանդները օծելու սովորութիւնը՝ որն որ
հոս կընշանակէ Լուսաբեալը իբրեւ միջոց մը

անոնց հրաշքով բժշկուած ըլլալուն, բոլորովին դադարած է քրիստոնէից մէջը:

Մանաւանդ նշանակութիւն արժան է հոս թէ իւրով օծելու սովորութիւնը՝ որուն վերայով որ կրխօսի Հակովբոս, միայն հիւանդը առողջանալու նկատմամբ կը դործածուէր, ու չէ՛ թէ բնաւ մեռնողին հոգեւոր պէս օգուտ մը տալու դիտաւորութիւնով:

Նաեւ պէտք է նկատել՝ որ Ղաւաքեալը հիւանդին բժշկուելը միայն հաւատքով եղած աղօթքին կրնձայէ: Այսանորոյ պէտք չէ՛ կարծել թէ իւրը մէկ միանաւոր զօրութիւն մը ունէր ան բանին մէջը, որովհետեւ հասարակ իւր մըն էր ան՝ ճիշտ ինտոր որ աւան մարդ իրենց տունները կը գործածէին:

Ղաւաքեալին աս խօսքը՝ «Եւ թէ որ մեղք ալ գործեր է նէ՛ պիտի ներուի անոր», աւանկ հասկընալու եմք. «Թէ որ հիւանդը միանաւոր մէկ ծանր մեղք մը գործեր է նէ, որուն համար որ Ղստուած ՚ի պատիժ՝ կը տանջէ զանկիայ, անոնց աղօթքին համար չէ՛ թէ միայն կը փարատէ ան հիւանդութիւնը, հապառնաւ կրնէրէ ան մեղքը՝ որն որ պատճառ էր եղեր իր հիւանդութեանը: Եւ ահա ասոր համեմատ իւր. Ժ. 29, 30, կը կարդաւք թէ տկարութիւններ ու հիւանդութիւններ կը խրկէ Ղստուած շատ անգամ մարդոց, ՚ի պատիժ իրենց մեղքին: Եւ Մեր փրկիչը հասարակօրէն միայն աս խօսքերը կըսէր հիւանդութենէ տանջուող անձին՝ երբոր կը բժշկէր անկիայ, «Բոլոր մեղքերդ ներուին քեզի». մանաւանդ խեթ հեղաթիւ աւաղանին քովի երսուելութիւն տարաւուն հիւանդին ըսաւ, «Նոյն ընդունոյալ ալ մեղք մի գործեր՝ որ ալ աւելի չար բան մը չպատահի քեզի»: Յօհ. Ե. 14:

Կապտանութիւնն առողջութեան կը վերադառնայ:

Սեր բաղմաղցաւ միտքը անհամար հիւանդութիւններու պատճառ կը ըլլայ մեղի: Սերն ամէնքս երեւակայութեան բըւնական կառավարութեանը հպատակեալ եմք: Եւ ահա որ իշխանութեան տակը մարդս այնպիսի կարողութիւններ կը ցուցընէ որ կը պատճառեն անոր համարձակութեամբ դէմ ելլել վտանգի և բաղմաղակ տիկ նեղութիւններու, կամ թէ ան նոյն մարդը թշուառ յուսահատութեան ամենա-

նուազ վիճակի մը մէջ կիցայ կըմընայ: Եւ երեւակայական հիւանդութիւնները աւելի վախնալու բաներ են՝ որովհետեւ հազիւ կը ըլլայ որ զեղը օգուտ գործէ անոնց, ու նաեւ դժուարաւ կը պատահի որ բարոյական զօրութիւնները բաւականապէս յաղթեն ան հնացեալ հիւանդութիւններուն: Երեւակայական ախտով բռնուած մարդուն անօգուտ է ըսել թէ ինքը հիւանդ չէ. ինչու որ ինքզինքը հիւանդ ըլլալ կարծէն ալ երեւելի հիւանդութիւն մըն է իրեն: Իր հանապազօրեայ կասկածները կայլային իր կենսական գործողութիւնները, մինչև որ իր ներքին գործարանները տկարանան. քիչ ան որ կը կարծէ թէ իր սիրտը ախտաւոր է, իր արիւնին շրջանը կը խանգարէ՝ որ միշտ մեր բարոյական յուզմունքներէն ներգործութիւն կառնէ, մինչև վերջապէս աս խանգարումը կը պատճառէ նոյն խակ ան ախտը՝ որմէն կը վախցուէր: Արտքին աս սխալմունքը կը ծագի զանազան պատճառներէ. զօրօրինակ՝ մոռաւոր յուզմունքներէն, կազմութենէն, կլիմայէն, կերակուրէն, նախնիքներէ իջած արամազրութիւններէն, վարժութեան եղանակէն: Տերտուղիանոս փիլիսոփայութիւնը ու բժշկականութիւնը կը կոչէր երկուորեակ քայրեր. վասն զի ասոնց երկուքն ալ մեր երեւակայութեանը վրայ իշխելու զօրաւոր պաշտօնեաներ են: Բայց ասոնց երկուքէն զօրաւորն դեղը ան սրտին հանգարտութիւնն է, որ Բրիտանի վրայ եղած ճշմարիտ հաւատքէն առաջ կուգայ:

Բայց երբն աճման ուժը:

Ատտերդըն* հեղինակը իր բնական պատմութեան ճառերուն մէջ կը պատմէ որ ընկղղ մը երկանաքարի՝ մը տակ պահուած, որ կը ծող կենդանիներէն մէկը տարած էր հոն, բողբոջեցաւ ու ծղօտը քարին մէջ տեղի ծակէն դուրս ելաւ: Եւ ընկղղներն տարոց տարի մեծցաւ հաստոցաւ. ու երբ որ գլխովին լեցուց ան բոլորակ ծակը, նեղելով իր աճմանը մէջ, սկսաւ անդայ եղանակաւ վեր վերցունել ան մեծ քարը: Եւ յօրուան օրս, կըսէ, նոյն երկանաքարը միայն ծառին բունին վրայ կեցած է, գետնէն 20 ասնիքներ բարձրութեամբ: Եւ ընկղղներն 8 ֆէթը բարձրութիւն ունի ու պատուական պտուղ կը բերէ:

*Waterton.

¹ Տէյլընի լաշը:

Չարացումովը , թէ «Յնդա , համբուրելով

Չարացումովը ժամանակը փոխանակ մաշեցրնելու զմեզ սնտոի ցաւերու և ան զօր փախաքնեցումէջ , թէ որ ուղէինք մեր նոր վիճակին յարմարեցնել զմեզ , ընդունիլ զանիկայ , ու անձնատուր ըլլալ անոր տուած օգնութիւններուն , անյարադ ձեռք կըբերէինք նոյնչափ զբաղմունքի նիւթեր որչափ որ անոնցմէ կորուսեր եմք , և այսպէս մտքի բաւական հանդարտութիւն կըզղայինք դրեթէ ուրախ և երջանիկ ըլլալու : Բայց ձախորդութիւնը մեզի կըդրդէ և այնպէս կըթուի որ կուղեմք բախտը պատժել , զըկելով զմեզ անկէց որ մեզի կըթողու :

Խորհրդածոն-Լէւն-Լեւն-Լեւն :

Գլուխ Ը

Յիսուսի բռնուիլը :

Ո՛վ Գառն Լստուծոյ ամբիծ և անարատ , սպիտակ քան զնոյն ինքն անմեղութիւնը . Ի՞նչ բաժին ունէիր դու ան խաւարային թշնամիին՝ ան յափշտակող զայլին հետ որ քեզ պատառելու եկաւ : Ի՞նչ միաբանութիւն կրնար ունենալ Վրիտտա՝ Բեյլարին հետ . արդարեւ ոչինչ , ինչպէս և ոչինչ միաբանութիւն կրնայ ունենալ լոյսը՝ խաւարին հետ : Բայց աս խոնարհութիւնը ևս մարդասիրաբար ցուցուց , ու մատնիչին յանցանքը աւաւել ևս ծանրացաւ . ուղղութեան դառնալը զանց ընելուն համար . որովհետեւ հիմա անոր սիրտը կակղացընելու և անոր զազանային ձեռնարկութեանը վրայով իր յամառութենէն զինքը դարձունելու մէկ մարդասիրութիւն մը պակաս չմնայ : Եւաջուց ինքզինքը յամառեալ ցուցուցեր էր խրատներու և զգուշութիւններու և սպառնալիքներու դէմ . և հիմա Տէրն մեր աս վերջին փորձառութիւնը կրնէ , և թէ որ հնար է նէ զանիկայ ամէցունելով զդման բերելու համար՝ անոր միտքը կըձգէ իրենց առջի մտերմական բարեկամութիւնը , աս ընտելական խօսքովը հարցունելով անոր , «Ի՞նչեր , ինչո՞ւ համար եկար» . այնուհետեւ անոր բարեկամութեան և յարգութեան կերպարանքով ծածկուած ամենապատ և սոսկալի գաւաճանութիւնը կըմեղադրէ ան միւս

հարցումովը , թէ «Յնդա , համբուրելով կըմատնես Որդին մարդոյ» :

Եւ արդ՝ ահա «Վոյնայիք քու վրադ ելած են , Վանիտոն» . Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը մատնուած է . անզգայ մեղաւորներուն , նորանշան չարութեան անձնատուր եղած մեղաւորներուն : Վասն զի ո՛վ չէր յուսար անոնց երկնչիլը երբոր իրենց առջի յարձակմանը ետ ետ դային , և քու ամենակարող բազուկիդ զօրութեամբը յերկիր կործանեցան : Եսիկայ դուն զքեզ պաշտպանելու՝ կամ քու կեանքդ ինքրորդներուն ձեռքէն զքեզ ազատելու մտօք չըրիր , այլ պարզապէս ան չարադործներուն յանդիմութիւնը սատկելու և յայտնապէս անոնց ցուցնելու՝ թէ իրենց չարութիւնը քու վրադ զօրութիւն մը չունէր , այլ դուն ինքնդ հաճեցար թոյլ տալ ան ժամուն որ զօրէ քեզի : Եւ ո՛վ կրնայ առանց սատիկ ցաւակրութեան լսել անգթութեամբ քեզ բռնելին , իրենց մահառիթ բռնութեանը մէջ յառաջանալին , քու սրբադան ձեռքերդ կապելին , ու Լստուծոյ աս անմեղ Գառն որ իր բերանը չէր բանար՝ մորթելու տանելին , աւաղակներուն և մարդասպաններուն արժանաւոր ամէն կերպ նախատալից թշնամութիւններով : Վու որորմութիւնդ այնպէս յորդառատ քաղցրութիւն մը ունէր , որ և աս դիպուածիս ինքզինքը ծաւալեց քու ամենադառն թշնամիներուդ վրայ : Վասն զի՝ երբոր քու աշակերտիդ փութաջան նախանձաւորութիւնը քու վրադ յարձակողներուն մէկին ահանջը կտրեց , դուն քու ամենազօր մերձեցմամբդ ան վէրքը բժշկեցիր , ու նաև քեզի պաշտպան ըլլալ ուզողը քեզ բռնողներուն վրէժխնդրութենէն պաշտպանեցիր : Ենիծեալ ըլլայ իրենց բարկութիւնը՝ որ սատիկ էր , և իրենց սրամտութիւնը որ անողորմ էր* . յետին աստիճանի սատիկ , ու անողքի անողորմ . որովհետեւ ոչ քու հրաշագործ զօրութեանդ ահաւորութիւնը դողացուց նոյն բարկութիւնը , և ոչ քու նոյնօրինակ հրաշագործ ողորմութեանդ սքանչելի բարութիւնը կակղացուց զանիկայ ողորմութեան կամ խղճմունքի դարու :

* Օննաբ . խթ . 7 :

Գլուխ Թ

Տեառն մերոյ ապտակուիլը, թքոտուիլը, ու
ծեծուիլը:

Լսանգութ չարութիւնը յառաջ տանելով իմ ամենատիրելի փրկիչս քաջեցին տարին քահանայապետին տունը, ու ծերակոյտին առջեւ՝ որ անոր արեանը ծալաւ էր, ի մահ դատապարտեցին զինքը իբրեւ հայհոյիչ՝ ճշմարտութիւնը խոստովանելուն համար, որն որ ինքը սորվեցուցեր էր իր քարոզութեանը բովանդակ ընթացքին մէջ: Եւ զուն անատենը՝ ով ամենաքաղցր Յիսուս իմ, որ չափ բարբարոսական թշնամանքներ կրեցիր քու ազգէդ և քու ժողովուրդէդ: Եւն քու երկրպագելի դէմքդ՝ որուն հրեշտակները յարգութեամբ և անձաւ ուրախութեամբ կընայէին, որ իր լուսաւաճանչ ճառադայթները կըսփռէ ու բոլոր երկինքը ցնծութեամբ և ուրախութեամբ կըլեցնէ. այն դէմքը՝ որուն առջին պիտի իյնան աս երկրիս բոլոր մեծամեծները և պատուականները խոնարհաբար աղաչելով, անատենը պիտի շրթունքներուն թուքերովը աղտեղացաւ և արատաւորեցաւ, սեղանակապուտ ձեռքերով ապտակուեցաւ, ու կատականօք ծածկուեցաւ. տիեզերաց Տէրը անարգ գերիի մը պէս խաժամուծ ամբոխին ծաղը եղաւ, և անդր թութեամբ ծեծուեցաւ: Եւ ասիկայ բաւական չէր յագեցունել ձեր կատաղութիւնը, ով անգութ թշուառականներ: Այ. տակաւին կենդանի է, ու պէտք է որ իր արիւնը թափուի: Աստի կըբռնեն կը տանին զինքը անկէց. ու հեթանոսներն ալ աս եղբունաւոր գործիս մէջ բաժին մը ունենալու համար, անթիւատ շունի մը լեզուն ալ պէտք է որ անոր արեամբը թաթախի: Այսան որոյ Պիղատոսին առջեւ կըտննեն զինքը կապեալ, ու բոլոր ժողովուրդը իրենց անօրէն իշխաններուն թաղբութեամբը վրէժինդրութիւն կընեն, ու կըխնդրեն որ ի խաչ հանուի: Տես արդ՝ ով հոգի իմ, կատաղ ժողովուրդին կուրացեալ չարութիւնը: Եւն որ մեղք մը չգործեց՝ ու իր բերանը խաբէութիւն չգրտնուեցաւ, ան որ միշտ կըպրտըտէր բարիք ընելու՝ ու ողորմութեամբ անհամար հրաշքներ գործելով իր համբաւը հանեց,

չընդունուիր. ու քան զան նախամեծար կը համարուի աւագակը՝ մարդասպանը՝ ու աս պատմութիւնը գլուխը: Եւն նա Վառը ապրելու անարժան կըքարոզուի, ու գիշատիչ գայլը՝ որուն անօրէնութիւնները մահ ուան արժանի էին, կաղաւթ: Բարերար Վստուած. ինչ անհամեմատ բաղդատութիւն. ինչ անվայել փոխանակութիւն. ինչ յիմար անձինք էին ասիկայ ընողները, ինչ չար դատաւոր էր ասիկայ վճռողը: Այսան զի ան ամբարիշտ դատաւորը աղէկ դիտէր թէ անոր դէմ եղած ամէն աս ամբաստանութիւններուն արմատը նախանձութիւնն էր. և սակայն այն գիտակցութիւնը չզուպեց զինքը անոնց անդթութեան հրաժարելու, այլ ինքն ալ իր մեղքին յանդիմանութեանցը հակառակ՝ ձեռք տուաւ անոնց քու նեղութիւններդ աւելցնելու, ու չարաչար տանջեց ան հոգին որ անոնք յանիրաւի վերաւորեր էին: Կապեալ ձեռօք շերտվէսին խրկեց զքեզ, որ առաւել ևս ենթակայ ըլլաս ծաղու և նախատանաց. ու ան թագաւորին իր զինուորներուն բոլոր անարգանքները քու վրայէդ անցնէին ետքը դարձեալ իր առջեւ ընդունեց զքեզ՝ փողփողուն պատմութեամբ հագուած, ու սուտ թագաւորի հանդիսաւոր շուքով բերուած: Եւն հետեւ մերկացուց զքեզ քու ծիրանի զարդէդ՝ որով քիչ մը առաջ քեզ հագուեցուցեր էին ծաղը ընելով, ու մերկանդամ՝ բերաւ զքեզ՝ ապշելով քու վրայ նայող ամբոխին դէմ*, որ աս կերպարանքովս ալ անոնց տեսարան ըլլաս, ու ամէն կերպով յագեցունես անոնց չարութիւնը և նախատինքը: Եւ խայտառակութեան ետքը անողորմ խարաղաններ եկան. հերկադործները քու կունակիդ վրայ հերկեցին, ու երկայն և խոր ակոսներ բացինք. ու ամէն մէկ վերաւորող հարուած, ամէն մէկ իոց և սպի այնչափ հեռի էին քեզ տանջողները ի գութ շարժելու՝ որ միայն նոր հարուածներ կըպատճառէին, ու անոնց անգութեան ցնծութիւնները կըբաղմապատկէին:

*ՏԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Եւսպէս կըսէ Սուրբն Եւսեբիոս. բայց ասանկ չեմք գտնիր Եւտարանին մէջ:

† Սաղ. ԺԻԹ. 3:

Սրբազան անտիպոս-թիւնը . ու անյնտիւր-
թիւնն պարտաւ :

§ Ե

Սեր ունեցած կեանքէն բնաւ գոհ չեմք
ըլլար . այլ կուգեմք որ ուրիշին երեւա-
կայութեանը մէջ ապրիմք մտացածին կեան-
քով մը , և ասոր համար փոյթ ունիմք ե-
րեւելի ըլլալու : Աս մտացածին էակը զար-
դարելու ու պահպանելու անդադար կաշ-
խատիմք , ու ճշմարտին համար երբեք հոգ
չեմք ընել . և թէ որ հանդարտութիւն ,
կամ վեհանձնութիւն և կամ հաւատար-
մութիւն ունենամք , մեծ փութով կըծա-
նուցանեմք զանիկայ , որպէս զի աս առաքի-
նութիւններն ալ նոյն մտացածին էակին
հետ միանան . ու աս բանիս համար պատ-
րաստ եմք մինչև անգամ ան նոյն առաքի-
նութիւնները մեզմէ հեռացընելու . ու քա-
ջութեան համբաւը ստանալու համար՝ յո-
ժարակամ երկջող ըլլալու կըփափագիմք :
Սեր ճշմարիտ գոյութեանը ոչինչ ըլլալուն
երեւելի մէկ նշանն ալ աս է որ , երբեք գոհ
չեմք անկէց առանց մտացածինին . ու շատ
անգամ կըհրաժարիմք անկէց միւսոյն հա-
մար : Այսին զի ով որ իր պատիւը պահ-
պանելու համար չմեռնի նէ անիկայ վատա-
նուն կըհամարուի : Քառաց քաղցրութիւնը
այնքան մեծ է , որ ինչ և իցէ բանի նաև
մահուան հետ կից որ ըլլայ , սիրելի է մար-
դուն :

§ Բ

Գուռողութիւնը բոլոր մեր թշուառու-
թիւններուն հետ զուգահաւասար կուգայ .
վասն զի աս մոլութիւնը կամ կըծածկէ զա-
նոնք և կամ թէ որ յայտնէ , սնափառու-
թեամբ մը կըպարծենայ զանոնք ճանչնա-
լու : Գուռողութիւնը անանկ բնական կեր-
պով մը կըպահէ մեզն մեր թշուառու-
թիւններուն և սխալմունքներուն մէջ , որ
կեանքերնիս անգամ ուրախութեամբ կը
կորնցունեմք , բաւական համարելով ասոր
վրայ եղած լոկ յիշատակութիւնը :

§ Գ

Սնափառութիւնը այնպէս հաստատուած
է մարդու սրտին մէջ , որ սպասաւորը ,
խոհարարի աշկերտը և բեռնակիրը անգամ
կըպարծենայ և կուգէ որ իր վրայ զարմա-

յողներ ունենայ . ասանկ են նաև փիլիսո-
փաները : Անոնք որ փառաց զէմ կըզրեն ,
կուգէն որ գրեթէ ուն համար փառք ստանան .
իսկ անոնք որ կըկարդան ասոնց գրածնե-
րը՝ փառք կըխնդրեն կարդալուն համար .
ես ալ որ աս գրեցի , գուցէ ունիմ ան փա-
ւաքը , որ հնար է թէ ասիկայ կարդացող-
ներն ալ ունենան :

§ Դ

Այնպիսի մեծամտութիւն մը ունիմք որ
կուգեմք թէ բոլոր աշխարհ՝ նաև անոնք
որ մեզմէ ետեւ պիտի գան , ճանչնան զմեզ .
և այնքան անասլարծ եմք որ մեր բոլոր
տիքը եղած հինգ կամ վեց անձինքներու
ստուած պատիւը մեզի կըզուարճացունէ ու
գոհ կընէ :

Փաստ Գաղչնայ :

Յաղացպանը այնպէս կըկարծէ որ ցորենը
միայն իր ջաղացքը դարձնելու համար կաճի :

Ղաթաթ մը սղցելու աղբիւնին մը :

Աս հանդարտ նստեր էի աղօրելքը , ու ա-
նիւններուն դառնալը և ջուրին վազելը
կըզդիտէի :

Այնպէս զբաղած էր միտքս ասոնց վը-
րայք , որ գրեթէ երազի մը մէջ էի . կը
նայէի ճերմակ սղոցին՝ որ եղևին փայտին
մէջ տեղէն կտրելով ճամբայ մը կըբանար
իրեն :

Եղևինը կենդանի կըթուէր , ու իր զող-
դոջուն ջիղերովը՝ կարծես թէ ողբալի ձայ-
նով կըսէր ինձի . « Գուռ ժամանակին եկար
հոս , ո՞վ ճամբորդ , վասն զի քեզի համար
է որ աս վէրքը կուտան իմ սրտիս : Գեւ-
թիչ մը ատեն ալ քալելէդ ետեւ , աս փայտը՝
հողին մէջ հանգչելու անկողին մը պիտի
ըլլայ քեզի » :

Ան նոյն ատենը տեսայ որ չորս տախտակ
վերէն վար ինկաւ . սիրտս ճիւղեցաւ . ուղե-
ցի որ խօսք մը թողովեմ , բայց անիւր ալ
չէր դառնար :

Ղշմարտութիւնը մէկ խիստ մեծ ու լուսա-
պայծառ ջահ մըն է . վասնորոյ անոր առջևէն
կիսաբաց աչքով կանցնիմք , որ չըլլայ թէ այ-
րիմք :

Չախալածը :

Գաղափարներն ճշմարտութեան :

Անհրաժեշտ պարտաւորութիւն է մարդուս ամէն ժամանակ ջատագով ըլլալ ու ելցէ յայտնի ճշմարտութեան . վասն զի թէ և յոյս չունենամք ալ թէ մարդիկ անմիջապէս պիտի ճանչնան զանիկայ , բայց աս կերպովս կրնամք անոնց մտքերը այնպէս հրահանգել որ ժամանակին՝ անաչառ դատաստան ընեն անոր վրայ , և ՚ի վերջոյ ճշմարիտ լոյսը ճանչնալու հասնին :

(Վ որ իր ընկերին սիրտը շահել կուզէ պարտի միշտ իր սիրտը անոր տալ :

Բան մը երենաչու համար՝ պարտիմք բան մը ըլլալ :

Լէէ Լ. Բերեգայն :

Աս կենդանին եղջերուներու սեռին մէջ ամենէն մեծ տեսակն է . իր ուսերուն կողմը ձիէն աւելի բարձր է . եղջերներուն ծանրութիւնը երբեմն մինչև յիսուն լիտր կուգայ , անանկ որ աս ծանր բեռը վերցունելու համար իր վիզը կարճ և ուժեղ է , որով կը դատուի ընդհանրապէս եղջերուն վրայ երեւցած համեմատութեանը վայելչութիւնն : Բայց անոնք որ պատեհութիւն ունեցած են աս կենդանին իր կատարեալ մեծցած եղջերներուն փառքովը բռն իր անապատին մէջ տեսնելու , կը վկայեն թէ ոչ մէկ կենդանի մը կարող է անոր պէս գեղեցիկ և վսեմ երևոյթ ունենալ : Երբ աս մեծայնիւ իր շարժուածքը քիչ մը ծանր է , և ուսերը դուռակէն՝ բարձր ըլլալով՝ ձիու պէս սաստիկ չկրնար արշաւել , այլ անկարգ ընթացքով մը կը յաւաքանայ , և ամէն մէկ քայլին իր յողուած ներք ճարձատիւն մը կը հանեն , որն որ քիչ մը հեռուէն կը լսուի : Երբոր արագ կը վազէ իր ետեւի ոտքերը կը բանայ որ առջևի ոտիցը վրայ չկիսէ , և նոյն ատենը իր գլուխը և ուսերը սաստիկ արշաւելու վրայ եղող ձիու մը պէս կը թռթռէ : Նամբուն վրայ ինկած ծառ մը , ցանկ մը կամ ուրիշ արգելք մը պատահի նէ առանց ցաթկելու՝ անոնց վրայէն քաշելով կանցնի կերթայ . վաղած ատենը իր քիթը վեր կը բռնէ որ իր եղջերները հորիզոնական ուղղութեամբ մնան դէպի կռնակին վրայ : Աս դիւքը կարգիւ զանի-

Սարգս :

կայ գետինը աղէկ տեսնալէն , անոր համար երբեմն վաղած ատենը առջևի ոտքերուն կոխելով կը սահի , և դէշ կերպով կը զլտորի կիյնայ :

Լէէն առանձնութիւն սիրող կենդանի մըն է , և զրեթէ միշտ մինակ կը պտրտի . իր լսողութիւնը շատ սուր է , և բոլոր եղջերուներուն ամէնէն երկչոտը և զգուշութիւն բանեցընողն է : Անոր համար է որ Լ. մերիդայի շնդիկներուն մեծ ու դժուարին արհեստն է Լ. չէի որսորդութիւնը , բայց մանաւանդ ձմեռը . քանզի ամառուսն եղանակին աս կենդանին մեծ ներութիւն կրելով մթերներէն՝ մարդուն մօտենալը այնքան հոգ չընէր : Իսկ ձմեռը որսորդը կը պարտաւորի շատ զգուշութիւն բանեցընել , քանզի չոր տերեւի մը խշրտոցէն և փոսած ճիւղի մը կոտորելու ձայնէն աս կենդանին զարհուրելով կը փախչի . նաև կը սարտաւորի հովին հակառակ կողմէն անոր վրայ երթալ որ իր հօտը չառնէ : Լ. չէն սովորութիւն մը ունի՝ որն որ շատ դժուար կընէ որսորդներուն անոր մօտենալը . երբոր խել մը տեղ կը լծայ , վերտին ետ կը դառնայ իր գայած ճամբայէն քիչ մը հեռանալով , և անանկ տեղ մը կը նստի որ իր առջի ճամբուն վրայէն իր ետեւէն իյնող որսորդին ձայնը լսէ կամ անոր հոտը առնէ : Բացի վարպետ որսորդը փոխանակ անոր ոտիցը շաւիղն հետեւելու , ան տեղին համեմատ կը դատէ թէ ո՞ր կողմէն պիտի դառնայ կենդանին , և կը լսի դէպի ան կողմը երթալ թէ և երբեմն ասիկայ չյաջողիր : Աս գործողութիւնը միշտ կը կրկնէ մինչև որ զանազան նշաններէն իմանայ թէ շատ մօտ է իր որսին : Ենտենը խիստ զգուշութեամբ յաւաքանալով թէ որ առանց տեսնուելու կենդանին դադարած տեղին մօտենայ , սովորաբար պզտիկ ճիւղ մը կոտրելով թեթև ձայն մը կը հանէ , ուրկէց վախնալով Լ. չէն կը լսայ կը ցաթկէ . բայց դեռ իր վտանգը աղէկ չիմացած սրունգները կորելով կը միգէ , որ ասիկայ իր փախչելուն պատրաստութիւնն է : Կենդանին աս դիւքին մէջ եղած ատենը որսորդները ուզած նուն պէս նշան կառնեն անոր վրայ , և շատ քիչ կը պատահի որ չկրնան մահացու հարուած մը տալ անոր :



Ալես Ամերիկայի:

Lat. Alces Americanus.

Տառ. Ալես:

Պրանքինի հասարակած ընկերությունը :

Պրանքինի իր ընտանիքէն բաժնուած ընկերութեան կարօտ ըլլալը զգաց . վաճառորդ այնպիսի ժողով մը հաստատեց որ այսօրուան օրս Սիւրբաթ Վահանգեւորուն և Սեփարիտանիայի մէջ ամէն տեղ գրտնուած ուսումնական ընկերութիւններուն օրինակ եղաւ :

«Ես հաւաքեցի , կրէի , ինծի ծանօթ գիտնականներուն շատերը . ու անոնց հաւանութիւնովը ընկերութիւն մը հաստատեցինք , որուն նպատակն էր փոփոխակի մէկըզմէկ լուսաւորել : Եւ մէն ուրեւթ իրիկունները կը ժողվըէինք . կանոն դրէր էի ընկերութեան ամէն մէկ անդամին որ մէկ կամ շատ խնդիրներ առաջարկէն կարգաւ , բարոյական , քաղաքական կամ բնական գիտութեանց վերաբերեալ բաներուն վրայ , որ ժողովոյն քննութեանը նիւթ մը ըլլայ ան , և իրեք ամիսը անգամ մը ճառ մը շարադրէ ինքը ու կարգայ իր հաւնած նիւթին վրայօք : Սեփարիտանները նախագահի մը կառավարութեան տակ պիտի ըլլային , ու քննութեան ճշմարիտ ոգին պիտի ունենային առանց վիճաբանութիւն սիրելու և յաղթութեան փափաք ունենալու : Եւ արդիւրեւ համար որ չըլլայ թէ գլուխ նին տաքնայ , անքաղաքամար խօսքերը և ուղղակի հակառակաբանութիւնները քիչ մը ատենէն ետքը արգիւտեալ վաճառք համարուեցան , ու կանոն դրուեցաւ որ աս պակասութեան մէջ իյնողները թեթեւ տուգանք մը վճարեն :

Եւ ժողովին երեւելի անդամներուն մէջ օրինակիչ զրազիր մը կար , ապակագործ մը , կօշիկակար մաթէմաթիզոս մը , անգաջափ մը , ատաղձագործ մը որ քաջ մեքենագործ էր , չորս հոգի տպարանի բանւոր , երիտասարդ տղայ մը հարուստ տընէ , և վաճառականի զրազիր մը : Եւ ետքինին համար Պրանքինի կրէի , թէ իրենց բարեկամութիւնը մինչև անոր մահը տևեց , քառասուն տարիէն աւելի , և աս ժողովն ալ զրեթէ նոյնչափ երկար ատեն հաստատուն մնաց :

Եւ մէն անգամ ժողովը սկսուելուն կը կարգացուէին զանազան հարցմունքներ . ասոնցմով կըրէ Պրանքինի աս ժողովը զի-

տութիւններու , բարոյականի և քաղաքականութեան հաշակաւոր վարժարան մը եղաւ : Վանդի աս հարցմունքները կըստի պէին մեզի որ անոնց վերաբերեալ զրբերը ուշադրութեամբ կարգամբ , որպէս զի անոնց վրայօք արժանապէս խօսելու կարողութիւն ունենամք : Եւ կերպով ձեռք կը բերէինք նաև խօսակցութեան վայելուչ ու նակութիւններ , բանցի աղէկ կըսորվէինք զգոյշ կենալ ու բնաւ մէկզմէկ չվիրաւորել խօսքով :

Եւ մէն մէկ ժողովին սկիզբը ընելու խնդիրները .

Եւ խնդիրները կարգայնի դուն այսօր , ու քննեցիր թէ ասոնց վրայօք ինչ պիտի առաջարկես ժողովին :

1 . Քու վերջին ընթերցմունքներուն մէջ գտնիր բան մը որ նշանաւոր ըլլայ կամ ժողովին իմացընելու արժանաւոր , պատմութեան , բարոյականի , բնագիտութեան ճամբորդութեանց և մեքենական արհեստներու , կամ մարդկային գիտութիւններուն ուրիշ մասանցը մէջ :

2 . Ի՞նչ մասնաւոր պատմութիւն կարգայնի դուն աս օրերս որ օգտակար ըլլայ խօսակցութեան մէջ քու ընկերներուն պատմելու :

3 . Կըճանչնաս անանկ մէկը քաղաքացի մը որ մօտերս իր գործառնութիւնները պատուով կատարած չըլլայ , և ի՞նչ լսեցիր իր գծուարութեանցը պատճառներուն վրայօք :

4 . Կըճանչնաս անանկ մէկը որ աս օրերս յաջողութիւն ունեցած ըլլայ , և ի՞նչ միջոցներով :

5 . Ի՞տա՞ծ ես թէ մէկը որ հիմայ հարուստ է , հոս կամ ուրիշ տեղ , ի՞նչպէս ձեռք բերեր է ան հարստութիւնը :

6 . Գիտե՞ս արդեօք որ մեր հայրենակիցներէն մէկը մօտերս յարգութեան և հետեւութեան արժանի գործ մը ըրած ըլլայ . կամ թէ այնպիսի յանցանք մը գործեր է որ պարտիմք գիտնալ և զուշմնալ անկէց :

7 . Եւ քարեխառնութեան ո՞ր աղէտալի հետեւանքները զննեցիր կամ իմացար . անխոհեմութեան , կիրքերու , ուրիշ միջութեան մը կամ անտեղութեան ո՞ր հետեւանքները :

8 . Ո՞ր երջանիկ արդիւնքը բարեխառ-

նութեան խոհեմութեան, չափաւորութեան կամ ուրիշ առաքինութեան մը :

9 . Դուն կամ քու բարեկամներէդ մէկը հիւրնդոյմք կամ վերաւորեցմք աս օրերս, և աս դիպուածիս մէջ ի՞նչ դեղ ըրիք, և անոնք ի՞նչ ներգործութիւն ըրին :

10 . Կըճանչնամ մէկը որ աս օրերս ցամաքի կամ ծովու վրայ ճամբորդութիւն պիտի ընէ, և գիտն՞ որ առիթ պիտի ունենայ մէկը աս միջոցով բան մը խրկելու :

11 . Կըխորհի՞մ հիմայ այնպիսի բանի մը վրայ, որով աս ժողովը կարող ըլլայ օգտակար ծառայութիւն մը ընելու մարդկութեան, իր հայրենեացը, իր բարեկամներուն և իր անդամներուն :

12 . Իմացերե՞ս որ աս քաղաքը արժանապատիւ օտարական մը եկած ըլլայ, մեր վերջին ժողովէն ետեւ : Ի՞նչ լսեցիր կամ զիտեցիր իր բարուցը կամ իր տաղանդին վրայով, և կարծե՞ս որ աս ժողովը կարող է երախտիք ընել անոր և քաջաբերել զանիկայ :

13 . Կըճանչնամ համեստ երիտասարդ մը, որ գործի մը ձեռք զարնելու է կամ նոր սկսած է, և ժողովը կրնայ մէկ կերպով մը քաջաբերութիւն տալ անոր :

14 . Քու պատուոյդ դպչող կայ, և ի՞նչ կրնայ ընել ժողովը պատիւդ պաշտպանելու համար :

15 . Կայ այնպիսի մէկը որուն հետ բարեկամութիւն չունենաս, ու ժողովը կամ իր անդամներէն մէկը կարող ըլլայ քեզի անոր հետ բարեկամացնելու :

16 . Իմացար որ ժողովին անդամոցը մէկուն պատուոյն դպած ըլլան, և ի՞նչ ըրիր զանիկայ պաշտպանելու :

17 . Նախատինք կրեցիր մէկէն որուն ղեաստութիւնը ժողովին ձեռքը ըլլայ :

18 . Կարեւոր գործ մը ունի՞ս հիմայ, ուրուն համար կարծես թէ ժողովին խորհուրդը կարող ըլլայ օգուտ մը ընել քեզի :

19 . Ի՞նչ շահ ստացար դուն աս օրերս՝ հոս չգործնող անձէ մը :

20 . Լս ժողովին կանոններուն և ընթացքին մէջ կրտսնե՞ս այնպիսի բան մը որ ուղղութեան կարօտ ըլլայ :

Եւստորոք գաւառներէն միջինոք :

Խաբեբայ մարդուն համար կըսեմք, Սի հաւատար անոր ինչու որ քեզ կըխաբէ. անհաստատ դաւադրանի համար կըսեմք, Սի յենուր անոր ինչու որ քեզ կըձգէ : Սարդը կըխաբէ խաբեբայ ըլլալուն համար, ու դաւադանը տկար ըլլալուն համար. և սակայն մեր սիրտը աս երկու հանդամանքն ալ ունի : Սարդկային սիրտը ըստ ինքեան կարողութիւն չունի բարի բան մը մտածելու. չկրնար իր ուշադրութիւնը տալ տող աղօթքի մը վրայ հաստատ պահել, և անոր համար զարմանք է որ միշտ կըճանճրանայ սուրբ կրօնքէն որ բազմութիւ մասերէ բաղկացեալ ըլլալով՝ բովանդակ կենաց մէկ կարեւոր գործողութիւնն է :

Փարիզը՝ պահապանները :

Փարիզը մէջ երեք տեսակ պահապաններ կան. Քաղաքականութեան պահապաններ, Լսպահովութեան պահապաններ, և ռաբարձու պահապաններ. ասոնց ամէն մէկ կարգը իրեն որոշեալ պաշտօնը ունի :

Քաղաքականութեան պահապանին պարտաւորութիւնն է ապստամբութեան միաբանութիւնները իմանալ, խռովարարներուն զաղտնի շարժումը նկատել, և անոնց դադարեցնել իմանալ ու զանոնք աւերել :

Լս պահապանութիւնը կրկատարուի զաղտնի գործակալներու ձեռքով : Երբեմն՝ երեւելի գերդաստաններէ յառաջ եկած մարդիկ՝ որոնք իրենց անառակ վարքովը ինքըզինքնին փճացուցեր են, լրտեսութեան պաշտօնի կըմտնեն, որ դեռ կարենան պահել իրենց բազմաձախ և շուրջ ունակութիւնները : ()տարական մը երբոր Փարիզ կերթայ՝ ու կըմտնէ ընկերութեան մէջ, անշուշտ պիտի պատահի բանի մը մարդոց որոնք շատ անուշ կենցաղավարութիւն ունին, ու ամէն կերպ ծառայութիւնները իրեն ընելու յօժար են. ասոնք ուրիշ բան չեն՝ եթէ ոչ պահապանութեան լրտեսները : Լս քաղաքաբարոյ մարդիկը օտարականին ամէն մէկ քայլափոխը կըդիտեն. կը ջանան իմանալ իր կարծիքները, ինչ պատճառով փարիզ գացած ըլլալը, ու ինչ որ իմանան, իսկոյն իրենց մեծերուն կը ծանուցանեն :

Եւ գաղտնի պահապաններուն մէջ կանայք ալ կը գտնուին, որոնք սա միջոցով իրենց յիմարական ծախքերը կը հոգան կը ցուցնեն : Եւ կնիկները շատ խորամանկ ու շատ հնարագէտ են, ու իրենց նուրբ պաշտօնին մէջ շատ ճարտարութիւն կը բանեցունեն : Եւ տիեզերական անձանց տունները կը պտտին, ու հոն՝ մարդիկները խաղերու՝ երաժշտութեան և վառվառն խօսակցութեան զբաղած ատեննին, ասոնք բոլոր ըսուածներուն ականջ կը դնեն, ու խօսողներուն ամէն մէկ շարժումաճքը կը դիտեն :

Եւ յայտի լրտեսութիւնը բարոյականութեան օրէնքները անտարակոյս կեղծանէ, և ամէն խղճահար մարդ ասիկայ չգտնէ : Սակայն սա գաղտնի պահապանները երբեմն մեծամեծ չարագործութիւններու առաջը կանգնեն . քաղաքացւոյ ստացուածքին ու կենացը դէմ եղած դաւաճանութիւնները չկատարուած կը խափանեն . թագաւորին կենացը դէմ անարգ չարագործներուն ըրած դաւադրութեան առաջը կանգնեն . ու Վաղդիայի պէս երկիր մը կամ Գարիգու պէս քաղաք մը առանց սա քաղաքականութեան պահապաններուն հնար չէ որ ապահով մընայ :

Եւ պահովութեան պահապանները վերիններուն պէս օգտակար և հարկաւոր են : Եւսոնց պարտաւորութիւնն է չարագործութիւն ընող անձանց վրայ աչալըջութեամբ հսկել : Փարիզն մէջ անհամար անզգամներ կան, որոնք օրէնքին հնարանդութիւն չեն ըներ . իրենց մի միայն եկամուտը գողութիւնն է : Հաստուկ լեզու մը կը խօսին որ ուրիշներուն անձանքն է : ասիկայ արդէն հին լեզու է, ու ազգէ յազգ իջած է բանտերուն ու ցականաւերուն մէջի յանցաւորներուն մէջ : Եւ լրտեսութիւն գտած բանտաբեանները կամ բանտէ փախչողները իրենց գալը չի արհեստին մէջ աշակերտներ կը վարժեն : Կարգաւորեալ զօրաց գունդի մը պէս մէջերնին կարող և կանոն ունին . ու մանց գործը գողութիւն ըներու պատահութիւնները իմանալն է, և ուրիշներունը գողութիւնը կատարելը : Եւ գողութիւններուն մէկ բանինքը երկար ժամանակէ պատրաստուած են, շատ մեծ հոգով ու նախադիւշութիւններով կարգադրուած են : Իրենց

կարգին մէջ ունին գողցածնին ընդունողներ՝ որոնք արծաթը ու ոսկին խօկոյն կը հալեցնեն . դարբիններ՝ որոնք բանիքներ կը շինեն . կառավարներ որ զիրենք կը պտտուցունեն, ու գրագիրներ որ խարդախ ստորագրութիւններ կը գրեն :

Իրենց ընկերները կը խրկեն որ ստուգեն թէ գողութեան երթալու տուններուն յարկերը ինչպէս շնորհած են . կողաքները ինչ ձև են, ու տանը մէջ որչափ անձինք կան : Փողոցներուն մէջ բազմութիւն կը հաւաքեն, որ անզոյ զննողները զիւրութեամբ մերկացնեն : Թատրոններու մէջ, հասարակաց պտտրտելու տեղերը, և մինչև անկամ քարոզի ժամանակ սա գողերը բազմութեան հետ կը խառնուին, ու կը զբաղին ժամացոյցներ՝ ակնոցներ՝ գոհարներ՝ քսակներ՝ և ուրիշ ինչ որ կը նաննէ գողնալ : Գլխով ու արին է ստորագրել ասոնց բազմութիւն չարութիւնները, ու իրենց աներկիւղ ճամբաները, ու զանոնք կատարելու առաջադրութիւնները :

Ուստի Եւ պահովութեան պահապանները սա թշուառականներուն զիտաւորութեանցը հակառակ կենալու համար կարգադրուած են . ու այնպիսի ճարտարութիւն՝ նախանձաւորութիւն՝ և քաջութիւն կը ցուցնեն, որ մեծամեծ գովութեանց արժանաւոր է : Եւսոնք սա գողերուն շատերը կը ճանձնան . ասկէց զատ զարմանալի յաջողակութիւն մը ունին պարկէշտ ժողովրդոց մէջ անզգամները լրտեսելու : Եւսոնք ալ Վաղաքակա նութեան պահապաններուն պէս ժողովրդոց մէջ կը խառնուին քաղաքացւոյ ստացուածքները պահպանելու . ու երբոր գողին ձեռքը օտարականի մը գրպանին մէջն է, կը համին կը բռնեն զանիկայ, անանկ որ օտարականը զարմանալով ու զուարճանալով կը խոստովանի թէ պահապանը իրմէն աղէկ սրահպանութիւն կընէ իր քսակին վրայ : Եւ պահովութեան պահապանները զխառն գողերուն կարողութիւնը ու ճարտարութիւնը աղէկ գիտեն : Վանի մը տարի առաջ արքայական զբառուէն հազուադէպ զբոսայտները որ գողցուեցան, Եւ պահովութեան պահապանները կոչուեցան, որոնք սա գողութեան ինչ պարագաներով կատարուած ըլլալը քննելով խօկոյն ըսին՝ թէ այս ինչ և

այն ինչ անձինք ըրած են անիկայ : Կարծիքնին ուղիղ ելաւ . վասն զի նոյն մարդիկը որ բռնեցին , խոտովանեցան թէ իրենք ըրած են ան չարագործութիւնը :

Հոգաբարձու պահապաններուն վրայ հարկ չէ աս տեղս երկայն ճառել : Ըսոնց պարտաւորութիւնն է փարիզի համար հարկաւոր եղած պաշարներուն պահպանութիւնը հոգալ , փողոցներուն մէջ երթեկուցութիւնը ազատ ու զիւրիւն ըլլալու նայել , ու առողջութեան վնասակար եղած բաները վերցնել տալ : Ըս գործին մեծութիւնը կրնայ իմացուիլ երբոր զիտնամք թէ փարիզ տարիէ տարի 170,000 կով 330,000 ոչխար կուտէ , ու հաւի համար ութը միլիոն ֆրանք՝ կարագ եղի համար տասներկու միլիոն ֆրանք՝ հաւկիւթի համար հինգ միլիոն ֆրանք ծախք կը նէ : Փարիզու վաճառատեղները ութը հազարէն մինչեւ ինը հազար հոգի ուտելիք ծախողներ կը գտնուին . ու հոգաբարձու պահապանները ասոնց բոլոր գործերուն վրայ աջալըջութեամբ կը հսկեն :

Սեղբը որ իմ ներօրդիս կը բնակի :

Հոգ. Է. 17 :

Իրաւ որ Ղշմարիտ Վրիստոնեան անակ մեղաւոր մը չէ ուրիշ մարդոց նման , որոնք յօժարութեամբ և ունակաբար կը մեղանչեն , բայց զի ազատ չէ մեղքէն : Ընկիւն թէպէտ կատէ մեղքը և կրմաբաւի անոր դէմ և յաղթութիւն կը ստանայ անոր վրայ , բայց տակաւին մեղքը անոր մէջը կը բնակի : Վրիստոնեան թեան մէջ փորձաւոր քարոզիչ մը հետեւեալ ծանօթութիւնը կուտայ : « Ես կըզղջամ իմ մեղքերս , և կըմեղանչեմ ապաշխարութեանս մէջ . աղօթք կընեմ թողութեան համար , և աղօթելուս ատենը կըմեղանչեմ . միտքս կը հաստատեմ որ զգոյշ կենամ մեղանչելէն , բայց նոյն խորհուրդիս մէջ կը մեղանչեմ . ուստի կընամ ըսել թէ իմ բոլոր կեանքս գրեթէ հանապազօրեայ գործիք մըն է մեղքին » :

() տար երկիրներու մէջ ճամբորդութիւններ ընելը , երիտասարդութեան մէջ գոտաբարակութեան մէկ մասն է . կատարեալ հասակի մէջ կատարեալ փորձոյ մէկ մասը :

Պարսկերէնէն լատինոսացի արտաստում :

Հետեւեալ պատմութիւնը թէ և միայն Պարսկային առասպել մըն է , բայց զեղեցկաբար կը սորվեցունէ բոլոր կրօնասէր անձանց խոնարհամտ ըլլալ իրենց անձերուն մէջ , և մարդասէր՝ դէպի իրենց մեղակեցներուն :

Հայր Լ. Բրաւաճ և Ժերոնիմ օրհարարներ :

1. Եւ եղաւ որ աս բաներէն ետքը , Լ. Բրաւաճ նստած էր իր վրանին դուռը , իրիկուան դէմ :

2. Եւ աս հաճեցաւ իր մէկը իր դաւազանին կը թընած եկաւ անապատին ճանապարհէն :

3. Եւ Լ. Բրաւաճ ելաւ դիմաւորեց զանիկայ ու ըսաւ . « Երբ մտիւր կաղաչեմ քեզի , որ լուամ քու ոտքերդ , ու հոս հանգչէ աս գիշեր և առաւօտուն կանուխ ելիւ շարունակէ քու ճամբարդ :

4. Սակայն մարդը , չէ ըսաւ , Ես աս ծառին տակը պիտի կենամ :

5. Բայց Լ. Բրաւաճ մեծապէս ստիպեց զանիկայ , դարձաւ ծերունին ու մէկտեղ վրանը գացին , և Լ. Բրաւաճ անխմոր հաց եփելով կերան :

6. Եւ երբոր տեսաւ Լ. Բրաւաճ , թէ օտարականը գոհութիւն չէր մատուցանէր Լ. Բրաւաճի , ըսաւ անոր . Ինչո՞ւ համար դուն երկրպագութիւն չես ընէր երկնի և երկրի ստեղծող աւանդաբարձրըն Լ. Բրաւաճի :

6. Եւ ան պատասխան տուաւ և ըսաւ . Ես ոչ քու ըսած Լ. Բրաւաճի երկրպագութիւն կը նեմ , և ոչ իր անուանը փառք կը մատուցանեմ , վասն զի ես ինքնիրենս ապտուած մը շինեցի , որ միշտ իմ տանս մէջն է , ու բոլոր իմ խնդիրքս կը կատարէ :

8. Լ. Բրաւաճին նախանձը վառեցաւ օտարականին դէմ , ու ելաւ դուռս վռնտեց զանիկայ ծեծելով :

9. Եւ կէս գիշերուն Լ. Բրաւաճ կանչեց Լ. Բրաւաճին , ըսելով , Լ. Բրաւաճ մեր է օտարականը :

10. Եւ Լ. Բրաւաճ պատասխան տուաւ , և ըսաւ , Տէր , անիկայ չէր ուզէր երկրպագութիւն ընել քեզի , և ոչ իրեն օգնական կանչել քու անունդ , ուստի իմ առջեւս դուրս վռնտեցի զանիկայ անապատին մէջ :

11. Եւ Լ. Բրաւաճ ըսաւ , Ես՝ հարկը իննսունը ութը տարի համբերեցի իրեն , ու իննամեցի զինքը . թէպէտ և ինքը ինծի դէմ ապստամբ էր , ու դուն ինքնդ որ մեղաւոր մըն ես , չկրցար համբերել մէկ գիշեր մը :

Սահր Բնչպէս յանկարծ կրնայ գալ ան էակին որ միշտ գիտէ թէ անշուշտ պիտի մեռնի , և թէ իր մեռնելու ժամանակը անստորոգ է :

ՎԱՂԱՐՇԱԿ ՍԱՐԳԻՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Հիտեհալ օրը թաղեցաւ քաղաքիս Սրբոյն Ստեփաննոսի Լիեղեցւոյն գերեզմանատանը մէջ: Աս գիտուն անձը՝ որ քաջ հայկաբան և անգղիագէտ էր, շատ յարգ ստացած էր քաղաքիս մէջ՝ իր պարկեշտ և ազգասէր բնութիւնովը: Յուսամք որ իր օգտաւէտ գրուածները և թարգմանութիւնները անմահ պիտի մնան աղօթին օգտին համար: Անոր ուրիշ գործերէն զատ՝ նաև չորս տարի լեռնմարանիս գլխաւոր թարգմանիչը ըլլալուն համար՝ արժան կը համարեմք համառօտ յիշատակութիւն մը ընել հոս տեղ իր վերջին օրերուն վրայով:

Վանի մը ամիս առաջ յայտնի կերեար որ իր երկար ժամանակէ ՚ի վեր ունեցած հիւանդութիւնը աղէտալի վախճան պիտի ունենայ. վասն որոյ իր բարեկամներէն ոմանք արժան համարեցան որ անկեղծութեամբ երթան ծանուցանեն անոր՝ իր վիճակը: Աւրիշները դեմ կը կենային կարծելով՝ թէ աս բանը գուցէ վտանգաւոր ըլլայ անոր: Այսու ամենայնիւ աս պատմութիւնը գրողը զգաց որ ինքը պարտաւոր է իր մահուան մօտ եղող բարեկամին հետ անկեղծութեամբ վարուիլ. ուստի զգուշաւոր և խոհեմ խօսքերով իմացուց իրեն՝ թէ իր առողջանալուն յոյս մը չկայ: Հիւանդը մեծ հանդարտութեամբ ընդունեց աս լուրը, կրկին և կրկին շնորհակալ եղաւ ինծի իր մահուան մօտեւ նալը անկեղծութեամբ իրեն իմացունելուս համար: Անտոններ զուարճալի խօսակցութիւն մը ունեցանք մահուան և երկնից վրայով, և նոյն ատենը զրուցեց իր բերան սորուած երգերուն մէկը՝ որն որ հոս տեղ կը դնեմք:

Եւբոյ կը կոխեմ Յորդանան գետը,

Որ նաև դժոխքը աւերեցիր:

Փարատէ՛ իղմէն ան ամէն վախը.

Վեզի կաղաւթմ փրկիչ իմ գլխած:

Ղու որ մահուամբ զմահ կոխեցիր,

Վանան երկիրը տար զիս փրկուած:

Եսկէջ ետքը շատ անգամ դացի տեսնուեցայ իր հետը, և միշտ ուրտիս սրաով կը խօսակցէր ան Յաւիտենական Աշխարհին վրայ՝ որուն յայտնապէս կրժատենար ինքը:

Փետր. 5ին հարցուցի իրեն թէ մահուան երկիւղ կայ մի իր մտքին մէջը. “Վրե՛ թէ բոլորովին փարատեցան իմ երկիւղներս, ըսաւ, քանզի Վրիստոս կըսէ. Լիէք ինծի, և ով որ ինծի կուգայ դուրս չեմ հաներ, ուստի թէ որ ես իմ անձս իր գիրկը ձգեմ՝ նէ պիտի թողնու զիս որ կորսուիմ: Վրե՛ թէ որ մեծ մեղաւոր մըն եմ ես, բայց Վրե՛ թէ ամենամեծ փրկիչ է”: Լսեցն ալ ըսաւ “Ահ ես խիստ մեծ մեղաւոր եմ աս աշխարհիս մէջ”: Բայց սակայն զինքը ճանչցողները կը վկային անոր անարատ վաքը մը ունենալը, միայն թէ աս խօսքերով իր խորին խոնարհութիւնը յայտնի կը ըլլայ:

Փետր. 10ին երթալով տեսայ որ իր շնչառութիւնը հետզհետէ կը անկարանար, և մահուան կը մօտենար. երբոր զիս տեսաւ սկսեց ուրախութեամբ ժպտիլ թէ և անմարտիկ ցաւ կը զգար իր շնչառութեանը դժուարութիւնէն: Իրեն ըսի, թէ “Տէրն մեր Հիսուս խօսք տուած է որ մեզի համար տեղ մը պատրաստեցէն ետեւ՝ նորէն պիտի դայ ու մեզ իր քովը առնէ”: զուարթ դէմքով մը ըսաւ. “Աս գիշեր”: “Ղու՛ն կերթաս, ըսի, թաղաւորաց թաղաւորին պալատը, վասն որոյ՛մենք չպիտի ցաւիմք քու երթալովդ համար: Ղու՛ն յաւիտենական լոյսը կերթաս, բայց մենք կը մնամք խաւարը”: “Աս արժանի չեմ”, պատասխանեց խոնարհութեամբ:

Նոյն գիշերը ժամը չորսին ատենները կանչեց իւր կիներ և բոլոր տանը մէջ գտնուողները իր քովը, և ըսաւ “Արթաւոր”: Իր վերջին հրաժարական ողջոյնը անոնց տալով, և զանոնք մխիթարելով առանց նեղութեան նշան մը ցուցունելու հանդարտութեամբ իւր հոգին աւանդեց:

Աս հաւատարիմ պատմութեանէս երկու դաս կը սորովեմք:

Իսկա՛ Վէշ և վնասակար սովորութիւն մըն է մեռնելու մօտ եղող հիւանդները խաբել, անոնց սուտ յոյս մը տալով թէ պիտի առողջանան: Այն անձը որ աս աշխարհէս պիտի ելլէ շատ անգամ ժամանակի կրկարօտի իր աշխարհային գործերը կարգադրելու համար: Մեծ մխիթարութիւն ունէր աս յիշեալ բարեկամիս որ ատեն ունեցաւ իր գործերը կատարելապէս կարգի դնելու: Մահաւանդ թէ մահուան մօտ եղող հիւանդը պէտք է որ ամէն կերպով պատեհութիւն ունենայ իր հոգեւոր գործերը կարգադրելու:

Եւբոյորդ՝ Հոս կը տեսնեմք թէ որչափ զօրաւոր է Վրիստոնեային յոյսը: Անով կը յաղթուին մահուան երկիւղները, և ան յոյսով մարդ կարող է բուն իր գերեզմանին մէջ նայելու առանց վախի: Բայց երբոր մենք մեր վերջին պատերազմին մէջ կը գտնուիմք, չէ թէ բուն մեր արդարութեանը վրայ վստահ ըլլալով կընամք այնպիսի յոյս մը վայելել, այլ կը կարօտեմք լուսադոյն արդարութեան մը և լուսագոյն յոյսի մը: Կը հարցունես թէ ո՞ր կը գտնամք զանոնք: Ղու՛ն փնտռէ Վրիստոսի Լեւոտարանին մէջ, որուն մէջ մեր մեռնող բարեկամը փնտռեց և գտաւ: